Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2022-2023 ուստարի)
11-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է Իսրայել Օրին, որպես ռուսական դեսպանության ղեկավար, եղել Սպահանում. 0,5 մ.
   ա/ 1711 թ. բ/ 1705 թ. գ/ 1708 թ. դ/ 1709 թ.
2. Բայազետի հայ կամավորներից ո՞վ է կարողացել ծպտյալ անցնել թշնամու օղակով և տեղեկացնել գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին բերդի օրհասական դրության մասին. 0,5 մ.
   ա/ Սամսոն Տեր-Պետիկյան բ/ Սամսոն Տեր-Պողոսյան գ/ Հակոբ Պողոսյան դ/ Սիմոն Տեր-Պետրոսյան
3. Որտե՞ղ է ծնվել Հովսեփ Էմինը. 0,5 մ.
   ա/ Կալկաթայում բ/ Համադանում գ/ Մադրասում դ/ Նոր Ջուղայում
4. Ո՞վ է Նադիր շահի կողմից ստացել խանի տիտղոս. 0,5 մ.
   ա/ մելիք Շահնազարը բ/ մելիք Հակոբջանը գ/ մելիք Եգանը դ/ մելիք Մանուչարը
5. Ո՞ր թվականին է հիմնադրվել Հնչակյան կուսակցությունը. 0,5 մ.
   ա/ 1883 թ. բ/ 1885 թ. գ/ 1887 թ. դ/ 1889 թ.
6. Որքա՞ն էր Տիգրան Մեծի տերության մեջ ընդգրկված բուն հայկական տարածքը. 0,5 մ.
   ա/ շուրջ 400 հազ. կմ^2 բ/ շուրջ 2 մլն կմ^2 գ/ շուրջ 1 մլն կմ^2 դ/ շուրջ 360 հազ. կմ^2
7. Ո՞ր գավառում է կառուցվել Արշակավան քաղաքը. 0,5 մ.
   ա/ Կոգովիտ բ/ Ոստան Հայոց գ/ Բագրևանդ դ/ Նիգ
8. Ե՞րբ է Վանի ռուսական զորախումբը սկսել նահանջել դեպի ռուսական պետության սահմանները. 0,5 մ.
   ա/ 1914 թ. դեկտեմբերի 9 բ/ 1915 թ. հունվարի 5 գ/ 1915 թ. հուլիսի 9 դ/ 1916 թ. փետրվարի 16
9. Ե՞րբ է կազմվել Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
10. Ե՞րբ է տեղի ունեցել Խանասորի արշավանքը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
11. Ո՞վ էր Կեսարիայի շրջանում հայտնի «Մեծ չելլոյի» առաջնորդը: 0,5 մ.
12. Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում որքա՞ն հայ է վերաբնակվել Ռուսական կայսրության տարածք: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Ղրիմի պատերազմի ավարտը
    բ/ Եկեղեցական կանոնադրության (պոլոժենիեի) հրապարակումը
    գ/ Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից արևմտահայերի ազգային կանոնադրության հաստատումը.
    դ/ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը
    ե/ Թուրքական կառավարության կողմից բարենորոգումների հրովարտակի (թանզիմաթի) հրապարակումը
    զ/ Կովկասի փոխարքայության հիմնումը
    է/ 19-րդ դարի ռուս-թուրքական երկրորդ պատերազմի սկիզբը
    ը/ Աբաս-Միրզայի բանակի կողմից Շուշիի բերդի պաշարումը
    թ/ Ադրիանապոլսի ռուս-թուրքական պայմանագրի կնքումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. «Պաշտպան հայրենյաց» 2. «Հայրենասերների միություն» 3. «Հայասեր-ազգասեր»
    4. «Սև խաչ» 5. «Բարենպատակ ընկերություն» 6. «Հայրենիքի սիրո գրասենյակ»
    ա. Մոսկվա բ. Երևան գ. Վան դ. Կարին ե. Մեծ Ղարաքիլիսա զ. Ալեքսանդրապոլ

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա/ Արմենականները կրել են Ա. Գերցենի «Կոլոկոլ» թերթի գաղափարական ազդեցությունը:
    բ/ Վան քաղաքի մտավորականների գաղափարական ոգեշնչողներն են եղել Խրիմյան Հայրիկը, Մկրտիչ Փորթուգալյանը և Մկրտիչ Ավետիսյանը:
    գ/ 1892 թ. ընդհանուր ժողովում «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը վերանվանվել է «Հայ հեղափոխականների դաշնակցության»:
    դ/ Արմենականները եղել են հայրենի հողի վրա ստեղծված առաջին ազգային կուսակցությունը:
    ե/ Հնչակյանների ազգային թևը Ա. Արփիարյանի գլխավորությամբ հեռացել է կուսակցությունից և 1898 թ. Հանդես եկել «Վերակազմյալ հնչակյաններ» անունով:
    զ/ Հայ քաղաքական մտքի պատմության մեջ արմենականներն առաջինն են եղել, որ Հայկական հարցի լուծումը համարել են ամբողջական հայրենիքում պետության վերաստեղծումը:

է/ Հնչակյանների սոցիալիստական թևը, որը կարևոր խնդիր է համարել սոցիալական ազատագրությունը, կազմել է մեծամասնություն, իսկ ազգայինը՝ փոքրամասնություն՝ հեռանալով կուսակցությունից:
ը/ 1892 թ. սեպտեմբերին «Դրոշակ» թռուցիկ թերթի անդրանիկ համարում հրապարակած հռչակագրով դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրությունն ազդարարել է իր գլխավոր խնդիրը:
թ/ 1892 թ. Երևանում տեղի է ունեցել ՀՅԴ առաջին համագումարը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ Մամլուքները օտարերկրյա վարձու զինվորներ էին, որոնք ծառայում էին Եգիպտոսի սուլթանի անձնական գվարդիայում:
բ/ Կիլիկյան Հայաստանի խնամակալության գործակալը կոչվում էր պայլ: Նա թագավորի առաջին խորհրդականն էր, իսկ արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան:
գ/ Կիլիկիայի գործակալությունների մեջ ազդեցիկ դեր ուներ արքունի քարտուղարությունը, որի գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր, ով ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ և տնօրինում արքունի եկամուտները ու ծախսերը:
դ/ Գաղութ կամ գաղթօջախ հասկացությամբ պատմագիտությունն անվանում է օտար երկրներում բնակություն հաստատած այն զանգվածներին, որոնք նոր միջավայրում ստեղծում են իրենց համայնքը: Գաղութի առաջացման կարևոր հատկանիշներից է ազգային դպրոցի ու եկեղեցու առկայությունը:
ե/ Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ էին նաև բյուզանդական օրենքները՝ ասիզները:
զ/ Կիլիկիայի հայոց բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ զբաղվում էր սպասալարությունը, որի ղեկավարը սպարապետի անմիջական տեղակալն էր:
է/ Կոստանդնուպոլսում 17-րդ դարում ձևավորվել է մեծահարուստ հայ չելեբիների դասը, որն զբաղվում էր արտաքին առևտրով:
ը/ 13-րդ դարի պետական գործիչ, օրենսգիր Սմբատ Գունդստաբլը նաև նշանավոր ժամանակագիր էր. նրա աշխատությունը հայտնի է «Ժամանակագրություն» անվանումով և ներառում է 951-1272 թթ. իրադարձությունները:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Ազատագրական պայքարի այն ձևը, երբ Օսմանյան կայսրությունում հայերը տարերայնորեն, անկազմակերպ դուրս են եկել կենաց ու մահու կռվի՝ իրենց ապրելու իրավունքն ու արժանապատվությունը պաշտպանելու համար, հայտնի է հայդուկային կամ ֆիդայական շարժում անունով:
բ/ Հայդուկները (արաբերեն՝ տասնապետ) Արևելյան Հայաստանում կռվող ժողովրդական վրիժառուներն էին:
գ/ 1891 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ը քրդական անհնազանդ ջոկատներից ստեղծել է մոտ 30 հեծելագնդեր, որոնք իր անունով կոչվել են համիդիե:
դ/ Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
ե/ Պանթյուրքիզմը (հակաթյուրքականություն) ենթադրում էր իսլամադավան բոլոր ազգերի միավորում օսմանյան կայսրության դրոշի ներքո և սրբազան պատերազմ (ջիհադ) բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ:
զ/ Ֆիդայիները կամ ֆեդայիները (արաբերեն՝ զոհ, ջան ֆեդա՝ ինքնազոհ) երդվում էին ամբողջովին նվիրվել իրենց ժողովրդի պաշտպանությանն ու ազատագրությանը:
է/ Ֆիդայիները, զենքը ձեռքին, հեռանում էին լեռներն ու անտառները և համիդիե գնդերի կազմում իրականացնում պատժիչ գործողություններ ատելի թուրք և հայ պաշտոնյաների նկատմամբ:
ը/ 1899 թ., երբ Աղբյուր Սերոբը Սասունի Գելիեգուզան գյուղում էր, քուրդ ցեղապետ Բշարե Խալիլն իր զորաջոկատով շրջապատում է այն տունը, որտեղ Սերոբն էր, և սպանում ֆիդայապետին:
թ/ 1900 թ. Գևորգ Չավուշն ու Անդրանիկը Աղբյուր Սերոբի սպանության համար վրեժխնդիր են լինում թշնամուց՝ սպանելով Բշարե Խալիլին և կոտորելով նրան օգնած դավաճան հայի գերդաստանը:

1	2	3

18. Գտե՛ք, առանձնացնելով գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
1878 թ. փետրվարի 19-ին կնքվեց ռուս-թուրքական հաշտությունը Կ.Պոլսից ոչ հեռու գտնվող Սան Ստեֆանո ծովափնյա ավանում՝ հայ մեծահարուստ Մանուկ Միրզայանի ամառանոցում:
Ուղղում – Ոչ թե՝ ——————————————, այլ՝ ——————————————:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ: Եթե հասել է մեր վախճանը, քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ՝ մեր աչքերի առաջ, տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»:
ա. Ո՞ր ճակատամարտում են ասվել այս խոսքերը:
բ. Ովքե՞ր էին այս կոչով դիմում հայ զինվորներին:
գ. Թվով քանի՞ զինվորներ հետևեցին կոչին:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ օրոք է Աքքադի թագավորությունը հասել իր հզորության բարձրակետին. 0,5 մ.
ա/ Սարգոն բ/ Մինա գ/ Սալմանասար I դ/ Նարամսին
2. Եգիպտական ո՞ր փարավոնն է կատարել կրոնական բարեփոխում և իրեն կոչել Էխնաթոն. 0,5 մ.
ա/ Ամենհոտեպ IV բ/ Թութմոս III գ/ Ռամզես II դ/ Յահմոս I
3. Ե՞րբ է ստեղծվել Միջազգային օլիմպիական կոմիտեն. 0,5 մ.
ա/ 1864 թ. բ/ 1884 թ. գ/ 1886 թ. դ/ 1894 թ.
4. Ո՞վ է ԱՄՆ-ի երրորդ նախագահը. 0,5 մ.
ա/ Ջոն Ադամս բ/ Ջեյմս Մոնրո գ/ Թոմաս Ջեֆերսոն դ/ Էնդրյու Ջեքսոն
5. Ինչպե՞ս է կոչվել 18-րդ դարի վերջերից Իտալիայում ազգային միավորման համար սկսված շարժումը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Հանրապետության հաստատումը Անգլիայում
2. «Իրավունքների օրենքի» ընդունումը Անգլիայում
3. Ֆրանսիայի առաջին սահմանադրության ընդունումը
4. Առաջին հանրապետության հաստատումը Ֆրանսիայում

1	2	3	4

ա. 1791 թ. բ. 1649 թ. գ. 1792 թ. դ. 1689 թ.
7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Ֆրանսիան, հայտնվելով դիվանագիտական մեկուսացման մեջ, 1792 թ. պատերազմ է սկսել եվրոպական պետությունների, առաջին հերթին՝ Ավստրիայի և Պրուսիայի դեմ:
բ/ 1794 թ. հակաֆրանսիական կոալիցիայի մեջ էին ներգրավվել Եվրոպայի համարյա բոլոր երկրները, և նա հարաբերություններ ուներ միայն ԱՄՆ-ի ու Հոլանդիայի հետ:
գ/ Վիեննայի համաժողովում գլխավոր դեր էին խաղում ռուսական կայսր Ալեքսանդր I-ը և ավստրիական կայսր Ֆրանց-Իոսիֆ I-ը, ինչպես նաև ժամանակի խոշորագույն դիվանագետներից Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Թալեյրանը:
դ/ Թալեյրանի դիվանագիտական հանճարի մեծագույն նվաճումը հաղթողների միջև եղած հակասությունների օգտագործման միջոցով պարտված Ֆրանսիայի տեղի վերականգնումն էր Եվրոպայի տերությունների շարքում:
ե/ Վիեննայի համաժողովը մերժել է մի շարք ազգերի, մասնավորապես՝ իտալացիների, լեհերի, ֆիններ և նորվեգացիների իրավունքը՝ ստեղծելու իրենց ազգային պետությունները, դա թույլատրելի համարելով միայն գերմանացիների և բելգիացիների համար:
զ/ 1889 թ. Հաագայում ԱՄՆ-ի նախաձեռնությամբ հրավիրվել է 26 պետությունների միջազգային համաժողով, որտեղ ընդունված համաձայնագրով երաշխավորվում էր միջազգային վեճերի խաղաղ կարգավորումը:
է/ 1904 թ. Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը, հարթելով բոլոր տարաձայնությունները, կնքել են «սրտագին համաձայնություն» (Անտանտ):
ը/ 1917 թ. փետրվարի 27-ին Ռուսաստանի մայրաքաղաք Պետրոգրադը հայտնվել է ապստամբների ձեռքում, և հեղափոխությունը հաղթել է. առաջացել է երկիշխանություն՝ Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդ և Պետական դումայի կոմիտե, որը դարձել է Ժամանակավոր կառավարություն:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2023 թ.